Ս. ՇՏԻԿՅԱՆ

ՈՐ ՉԱՐՄԱՏԱՎՈՐՎԵՆ ՍԽԱԼՆԵՐԸ

Մինչև բուն նյութին անցնելը՝ երկու օրինակ։

Խոսքը վերաբերում է անգլիացի հանրաճանաչ գրող Ռոբերտ Ստիվենսոնի «Գանձերի կղզին» վեպին, որը վաղուց դարձել է ընթերցողների անկապտելի սեփականությունը, հայերեն է թարգմանվել 1959 թ. «Արկածային գրադարան» մատենաշարով, ռուսերենից թարգմանիչ՝ Հ. Հայրապետյան։ Այս թարգմանության 8-րդ և 76-րդ էջերում հատվածաբար, իսկ 14-րդ էջում արդեն ամբողջությամբ, բերվում է ավազակների սիրած երգի մի քառատողը, որը հայերեն ներկայացված է այսպես.

Տասնհինգ մարդ մեռելի սնդուկի վրա

Յո-խո-խո և մի շիշ ռոմ,

Խմիր և սատանան քեզ մինչև վերջը կհասցնի,

Յո-խո-խո և մի շիշ ռոմ։

Շտապենք արձանագրել, որ այս քառյակի ռուսերեն «բնագիրը» կետ առ կետ համապատասխանում է նրա հայերեն թարգմանությանը և այս կապակցությամբ թարգմանիչ Հ. Հայրապետյանին որևէ դիտողություն անելու հիմք չունենք։ Սակայն հենց այստեղ, այսինքն՝ տվյալ այլալեզու միտքը մայրենիով վերաշարադրելու պրոցեսով է, որ «վերջանում է» թարգմանիչ-սովորական աշխատավորը, արևմտահայերի ոճով ասած՝ «ի մերս լեզու դարձնողը» և «սկսվում է» թարգմանիչ-ստեղծագործողը, թարգմանիչ-արվեստագետը։ Իսկ ստեղծագործական այդ աշխատանքը տվյալ դեպքում պետք է ծայր առներ անմիջապես, վերոհիշյալ քառյակի հենց առաջին իսկ տողից սկսած։ Եվ իսկապես, ինչպես պետք է հասկանալ «Տասնհինգ մարդ մեռելի սնդուկի վրա» տողը։ Տասնհինգ մարդ նստած էին, թե կանգնած այդ սնդուկի վրա, և եթե դա իսկապես այդպես էր, ապա սնդո՞ւկ էր այն առարկան, որի մասին խոսվում էր, թե տախտակամած։ Ապա. անգլերեն ամենաանն՞շան չափով իմացող յուրաքանչյուր ոք գիտե, որ քառյակի հաջորդ՝ «Յո-խո-խո և մի շիշ ռոմ» տողը բնագրում չէր կարող այդպես լինել, որ դա այդ կրկներգի ռուսական տառադարձությունն է։ Անգլիական բնագրում այն պետք է լիներ «Յո-հո-հո և մի շիշ ռոմ», կամ նույնիսկ «Յու-հա-հա և մի շիշ ռոմ», կամ նման մի բան և հետևաբար, հայերեն թարգմանության մեջ ինչ-որ բան այնպես չէ։ Էլ չենք խոսում այն մասին, որ

այստեղ և հետագա մյուս տողերում հատկապես շեշտվող խմիչքը՝ ռոմը, ընթերցողների համար մնում է չպատճառաբանված։ Պակաս տարակուսելի չէ քառյակի երրորդ տողը. «Խմիր և սատանան քեզ մինչև վերջ կհասցնի»։ Ինչ գործ ունի այստեղ սատանան առհասարակ, և այդ ում և որտեղ նա պետք է հասցնի, այն դեպքում մանավանդ, երբ նման բնույթի խոսակցություն կամ միտք հիշյալ ամբողջ քառյակում չկա։

Հարցը համեմատաբար հեշտությամբ լուծվում է, եթե վերցնում ենք Ստիվենսոնի «Գանձերի կղզու» որևէ անգլերեն նախօրինակ (ես ձեռքի տակ եմ ունեցել Նյու-Յորքի 1910 թ. հրատարակությունը) և գտնում ենք մեզ հետաքրքրող քառյակն ու նրա առթիվ տրված բավականին մանրամասն ծանոթագրությունը։ Դրանից իմանում ենք, որ հին Անգլիայում եղել է այսպիսի մի սովորություն. հանգուցյալին հողին հանձնելուց հետո, հարազատներն ու ծանոթ-բարեկամները վերադառնում էին նրա տուն, շուրջբոլոր նստում էին ննջեցյալին պատկանող որևէ իրի շուրջ, ասենք՝ ծխախոտատուփ կամ ձեռնափայտ, հագուստեղեն, աշխատանքային գործիքներ, իսկ տվյալ դեպքում՝ սնդուկ, և նայելով դրանց, պատմում էին մեծ ու փոքր հուշապատումներ իրերի տիրոջ մասին։ Սգահանդես-հուշերեկոն անպայման ուղեկցվում էր ռոմով, որը դեռ շատ հնուց համարվում էր այդպիսի արարողությունների միակ ճանաչված խմիչքը։

Այսքանից հետո, արդեն դժվար չէ հասկանալ, նախ, քառյակի ներքին ենթաբնագիրը, և ապա՝ տալ նրա ճշտված թարգմանությունը, որը պետք է լիներ այսպիսին.

Տասնհինգ մարդ հանգուցյալի սնդուկի շուրջը,

Յո-հո-հո և մի շիշ ռոմ,

Խմիր, սատանան քեզ տանի, խմիր,

Յո-հո-հո և մի շիշ ռոմ։

Կես ժամվա աշխատանք պահանջվեց ինձնից Երևանի ԳԱ Ֆունդամենտալ գրադարանում գտնել Ստիվենսոնի «Գանձերի կղզին» և կատարել այն ճշտումներն ու լրացումները, որոնց մասին խոսվեց։ Հետևաբար ընդամենը կես ժամվա աշխատանք էր պահանջվելու թարգմանիչ Հ.Հայրապետյանից, նախ՝ վերոհիշյալ ծանոթագրությունը հայերեն թարգմանության մեջ վերականգնելու համար (իսկ թարգմանիչն այդքան իրավասություն անպայման ունի), որ չգիտես ինչից ելնելով «Գանձերի կղզու» ռուսական տարբերակում դուրս է

թողնվել, և ապա՝ տալ հիշատակված քառյակի ճշգրտված թարգմանությունը՝ չկրկնելով իր անհեռատես ռուս գործընկերոջ թույլ տված սխալը։

Երկրորդ օրինակը բանասիրական առումով շատ ավելի հին պատմություն ունի և ծայր է առնում այն ժամանակներից, երբ Եվրոպայում սկսեցին հրատարակվել լուսնային քարտեզները։ Իսկ քանի որ լուսնի վրա գտնված խառնարանները կանոնավոր կլոր ձև ունեին, ապա նրանց տրվեց լատիներեն «ցիրկո» անվանումը, որը նշանակում է օղակ, շրջան։ Հետագայում, երբ Ռուսաստանում սկսեցին վերահրատարակվել Եվրոպական լուսնացույց քարտեզները, ապա նպատակահարմար դիտվեց պահպանել լուսնային խառնարաններին տրված այդ անվանումը , որը և օգտագործվեց համապատասխան ռուսական բառակապակցությամբ՝ «лунный цирк»։ Ինչ-որ տեղ ընդհանուր առմամբ ոչ ճիշտ այս մոտեցումը կարող է քննության դիմանալ, որովհետև ռուսերենն ունի նաև «циркуль» բառը և հետևաբար «շրջանի» կամ «օղակի» գաղափարը այս դեպքում ինչ-որ չափով պահպանվում էր և ուրեմն, օգտագործվելու դեպքում հասկանալի դառնում։ Սակայն երբ գործը հասավ այդ քարտեզները մեր պայմաններում հրատարակելուն և, հետևաբար, անվանումները թարգմանելուն, ապա կատարվեց անթույլատրելի սխալը։ Առանց գործի մեջ խորամուխ լինելու, հայազգի թարգմանիչները լուսնի խառնարանների վերոհիշյալ անվանումները թարգմանեցին բացահայտորեն սխալ և անիմաստ «Լուսնային կրկեսները» կամ «Լուսնի վրայի կրկեսները» ձևով, ոչ միայն աղավաղելով այդ անվանման ներքին բովանդակությունը, այլև ստեղծելով հայերեն լեզվական մի նոր անհեթեթություն։ Սխալ թարգմանությունը տարածվեց, մուտք գործեց ամենուր, տեղ գտավ նույնիսկ դպրոցական աստղաբաշխության դասագրքերում (10-րդ դասարանի՝ 1984 թվականին հրատարակված «Աստղագիտություն» դասագրքում (էջ 64) կարդում ենք. «Ալֆոնս կրկեսը, որտեղ դիտվել է...»՝ ավելորդ գայթակղության դուռ բանալով աշակերտների համար (անպայման հարցնելու են, թե լուսնի վրա կրկեսն ինչ գործ ունի) և անհարմար վիճակի մեջ դնելով ուսուցչին (հարցին պատասխանել չի կարողանալու, որովհետև ուսուցիչը պարտավոր չէ իմանալ այն ամենը, ինչի մասին խոսեց վերևում)։

Բավարարվենք այս երկու օրինակներով, թեև ցավոք, նման օրինակներ կարելի է էլի բերել և արձանագրենք թարգմանական արվեստի կարևոր հետևյալ հանգամանքը։ Այն դեպքում, երբ լավ, հաջողված թարգմանությունները դառնում են տվյալ ազգի հպարտությունն ու նրա մշակութային բարձր մակարդակի ցուցանիշը (հիշենք Մ. Նալբանդյանի, Հովհ. Մասեհյանի, Մ. Մամուրյանի, Հովհ. Թումանյանի և այլոց «հայեցումները», ապա վատ թարգմանված նույնիսկ

մեկ դարձվածքը, արտահայտությունը, անգամ մեկ բառը երբեմն ընդմիշտ կպչում-սոսնձվում է տվյալ լեզվին և հաճախ պարզապես անկարելի է լինում նրանից ազատվել: Իսկ քանի որ հայոց լեզուն գրավոր կամ բանավոր օգտագործող յուրաքանչյուր անհատից անկարելի է պահանջել, որ նա կարողանա հստակ իմանալ, տվյալ արտահայտության ճիշտ կամ սխալ լինելը, թե տվյալ բառը հայերենում կիրառվում է պարզ թյուրիմացության հետևանքով, թե ծագումով ու իմաստով հայկական է ըստ ամենայնի, ապա այդ սխալ բառերն ու դարձվածքները սկսում են կիրառություն ու գործածություն գտնել և այսպիսով, ավելի «անխոցելի» են դառնում: Հայոց լեզվի մեջ, օրինակ, այդպես էլ մնաց «արձագանք» բառը (ճիշտ տարբերակը՝ «արձագանգ»), որն արդյունք էր բացառապես այդ շաբաթաթերթի խմբագիր Աբգար Հովհաննիսյանի կամակորության (իր պարբերականի առաջին համարի անվանումը գրել էր «Արձագանք» և ի պատասխան այդ առթիվ ծայր առած սպանիչ քննադատության, դիտմամբ շարունակեց իր սխալը): ՈՒնենք «ցուցել» կամ «ցուցանել» բառերը, որ նշանակում են «ցույց տալ» և դրա ժխտական ձևը՝ «ապացուցել», որ նշանակում է ցույց չտալ: Մինչդեռ այսօր «ապացուցել» բառը գործածվում է ուղիղ հակառակ և սխալ, այսինքն՝ «ցույց տալ» իմաստով: Մեր լեզվում հանրահայտ է «ողնաշարավոր» բառը, այսինքն՝ «ողնաշար ունեցող», և դրա ժխտական ձևը՝ «անողնաշար», այսինքն՝ «ողնաշար չունեցող», սակայն այսօր, նույնիսկ դժվար է պարզել, թե ում անգրագիտության հետևանքով, գործածվեց այդ բառի հնարովի ժխտականը՝ «անողնաշարավոր», որի լեզվական անհեթեթությունը պարզ է առանց մեկնաբանությունների և անտեսումն է հայոց լեզվի քերականության ամենատարրական օրենքների, բայց այս տարբերակը այսօր լայնորեն կիրառվում է ու գործածվում: Հայոց լեզուն, վերջապես, ուներ և գործածում էր միության արևելյան ազգերից մեկի ճիշտ անվանումը՝ «ղալմուխ», սակայն չգիտես ինչ տրամաբանությամբ այն աստիճանաբար հանվեց շարքից և այսօր շրջանառության մեջ է բացահայտորեն անճիշտ «կալմիկը», որը նույնիսկ ռուսերենի ճիշտ տառադարձությունը չէ և այլն:

Վերոհիշյալից բխող օրինաչափ եզրակացությունը հետևյալն է: Բոլոր նրանք, ովքեր ընտրել են թարգմանական արվեստի բարդ, դժվարություններով ու ներքին լարումներով լի ճանապարհը, պետք է լինեն շատ ուշադիր և զգույշ, քանզի թարգմանական բնույթի թեկուզ ամենափոքր սխալները, հիմնավորապես «տեղավորվում» են մայրենի լեզվում և այդպիսով անուղղելի հիմք են դառնում նրա լեզվա-ոճական համակարգում:

Գրական թերթ, 1988, № 11, մարտի 11